ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1956 Общественные науки

Գ. Բդոյան

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտանիքի կազմը.–Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին հայկական գյուղը կապիտալիզմից ժառանգել էր մի կողմից հիմնականում ընտանիքի փոքր ձևերը, որոնք ընդհանուրի զանգվածային մասն էին կազմում, և մյուս կողմից՝ գերդաստանական հարաբերությունների մնացուկները պահպանող մեծ ընտանիքները, որոնք կազմում էին ընդհանուրի չնչին տոկոսը։

1920-ական թվականների վերջին ՍՍՌՄ այլ ժողովուրդների թվում մանրանում էր նաև հայկական գյուղական ընտանիքը։ Ըստ ընդհանուր վիճակագրական տվյալների՝ 1928 թվականին ՍՍՌՄ-ում գյուղացիական ընտանիքները գնալով մանրանում էին՝ նախահեղափոխական շրջանի 14—15 միլիոն ծխի դիմաց հասնելով 24—25 միլիոնի։

Այս երևույթը, մեր կարծիքով, հողային հարաբերությունների հետ անմիջական առնչություն ուներ։

Հողը գյուղացիության օգտագործման համար հանձնելու և, մանավանդ, այն ըստ շնչի վերաբաժանելու շնորհիվ ընտանիքներն արագորեն փոքրանում էին։ Մինչև այս պրոցեսի մեջ մտնելը՝ հայկական գյուղում ձևով մեծ և բովանդակությամբ գերդաստանական հարաբերությունների վերապրուկներ պահպանող ընտանիքների գոյությունը որոշ բացառությամբ, ապահովվում էր միայն բուրժուական և մասամբ կուլակացող միջակ գյուղացիության խավերում, որոնք իրենց հետ բերել էին ֆեոդալական բարքերի որոշ տրադիցիաներ։ Այդ տիպի ընտանիքներում համակեցությունը երբեմն նույնիսկ հանդուրժում էր չորրորդ սերնդի գոյությունն իր ներսում (ծնողներ > զավակներ > թոռներ > ծոռներ)։

Դրանց աշխուժացումն առավելապես նկատելի էր դարձել նեպի շրջանում։ Նույնիսկ որոշ ընտանիքներ իրենց նախահեղափոխական շրջանի բատրակներին պահում էին մինչև 1920-ական թվականների վերջերը՝ կոլեկտիվ տնտեսություններ կազմելու նախաշրջանը։ Կուլակային մեծ ընտանիքների փոքրացումն այդ նախակոլեկտիվացման էտապում մեծապես կապվում էր հողային հարցի և ժամանակի քաղաքական իրադրության հետ։ Փոքրացման առաջին էտապը կապվում էր գյուղի շերտավորման արագացման պատմաշրջանի հետ։ Որքան ավելի սուր բնույթ էր ընդունում կուլակության դեմ մղվող պայքարը, նույնքան արագորեն ու ճկունությամբ փոքրանում էին հարուստ տնտեսությունների միջոցով պահվող մեծ ընտանիքները։

Գյուղական բուրժուազիայի լիկվիդացիան, հետևապես մեծ ընտանիքների սեգմենտացիան 1920-ական թվականների վերջերին և 1930-ական թվականների սկզբներին հանգեցրին այն բանին, որ հայկական ընտանիքի պատմության ասպարեզից ընդմիշտ վերացան ներընտանեկան գերդաստանական հա-

բարերությունների վերջին, թեև չնչին, մնացուկները։ Այդ մնացուկներն էին՝ կնոջ հլու հնազանդությունն ու չխոսկանությունը, ներընտանեկան կյանքում երիտասարդ կանանց ու տղամարդկանց իրավունքների սահմանափակությունը, ամուրիներին ընտանիքում նյութական խիստ սահմանափակ բաժին հատկացնելը և նրանց տնտեսական ինքնուրույնության իրավունքից զրկելը, տան գլխավորի վարմունքի մեջ որոշ չափով դեսպոտիզմի առկայությունը և այլն։

Ընտանիքի փոքրացման պրոցեսն ուներ պրոգրեսիվ նշանակություն։ Այդ նոր տիպի ընտանիքը ստեղծում էր անդամների համար ավելի ազատ հարաբերությունների պայմաններ։ Փոքր ընտանիք ասելով, առհասարակ ըմբռնվում է 2—3 սերունդ ընդգրկող ընտանիքը, ընդ որում երկսերունդն իր էությամբ ավելի առաջադիմական է, քան եռասերունդը։ Վերջինս իր մեջ դեռևս պահպանում է գերդաստանական հարաբերությունների մասնակի տարրեր։

Այս հանգամանքներից ելնելով, «բազմանդամ ընտանիք» և «մեծ ընտանիք» հասկացությունները չեն նույնացվում։ Առաջինը փոքր ընտանիքն է մեծ անձնակազմով ու ազատ հարաբերություններով, իսկ երկրորդը՝ գերդաստանն է իր ընտանեկան բազմանյուղ կազմով ու անհավասար իրավահարաբերություններով։

Պետք է դիտել, որ առհասարակ լեռնային-անասնապահական շրջաններում ավելի, քան ցածրադիր-այգեգործական քաղաքամերձ շրջաններում՝ ընտանիքները բազմանդամ են եղել և այդպես էլ մնում են։ Այդ, ըստ ամենայնի ուշագրավ հարցը կապվում է կուլտուրական կենտրոններից հեռու կամ մոտիկ լինելու հետևանքով ընտանեկան հին հարաբերությունների ավելի կամ պակաս չափով պահպանելու, ինչպես նաև տնտեսության բնույթի հետ։ Լեռնային, համեմատաբար պահպանողական շրջաններում ընտանեկան բաժանքն ավելի ուշ է սկսվում, քան առավել կուլտուրական շրջաններում։ Լեռնային շրջաններում հոր, զավակների և թոռների համակեցությունն ավելի սովորական է, քան քաղաքամերձ շրջաններում և երկաթուղային տրանսպորտի շփման վայրերում։ Տնտեսության պրոֆիլների զգալի տարբերություններն ավելի նշանակալից դեր են խաղում ընտանիքների մեծությունները որոշելու գործում։ Հայտնի է, օրինակ, որ լեռնային վայրերում տնամերձ հողամասից ստացված արդյունքը շատ ավելի ցածր է, քան շոգ և ցածրադիր վայրերի համապատասխան հողամասերի արդյունքը։ Այդ է պատճառը, որ Արարատյան դաշտում տնամերձ հողամաս ստանալու ակնկալությամբ առկա են եղել ընտանեկան ավելի վաղ բաժանքներ, քան պետք է որ տեղի ունենար բնականորեն։ Դրանով էլ այստեղի ընտանիքների մի մասի փոքրացումը կատարվել է արհեստական ճանապարհով։ Ինչպես այդ արհեստական, այնպես և կեղծ բաժանքները մասնավոր սեփականատիրական հոգեբանության արգասիքներ են։

Նկատի ունենալով այդ կարգի երևույթների դեմ գյուղում տարվող պայքարի թուլացումը և կոլտնտեսային հողերի շռայլման հետագա մասսայական բնույթը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և Համ(ր)Պ Կենտկոմը 1946 թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ՝ միջոցներ ձեռնարկեցին հանրային հողը հափշտակումներից պահպանելու համար։

Այս որոշումները լիովին վերաբերում էին նաև հայկական գյուղին, որտեղ կոլտնտեսային կանոնադրության խախտումները բացառված չէին։

1920-ական թվականների կեսերին լեռնային ընտանիքները կազմի առումով ունեին միմյանց նկատմամբ հավասարության հասնող և բարձր ցուցանիշ-

ներ, իսկ ցածրադիր շրջաններում՝ առաջինների նկատմամբ ցածր ցուցանիշներ։ Եթե լեռնային շրջաններում ընտանիքների միջին կազմը 1926 թվականի մարդահամարի նախնական տվյալներով հասնում էր 4,47 անձի, ապա նույն ժամանակամիջոցում ցածրադիր գոտիներում այն հասնում էր 3,7 անձի։

1926 թվականին գյուղական բոլոր ընտանիքների միջին կազմը, այդպիսով, հասնում էր 4,08 անձի, իսկ 1931 թ. մարդահամարի տվյալներով, երբ կոլտնտեսությունները վճռական տնտեսական հիմքն էին դրել, ընտանիքի անձնակազմի միջին թիվը հասնում էր 4,45 անձի, ընդ որում լեռնային շրջաններում՝ 5,07, դաշտային-այգեգործական շրջաններում՝ 3,83 անձի[1]։

Երեխաների աճման առումով հայկական ընտանիքի բազմանդամ դառնալու ամենաուշագրավ շրջանը հանդիսանում է հետպատերազմյան էտապը։

1950 թ. տվյալներով Հոկտեմբերյանի շրջանի միայն Բամբակաշատ գյուղում 359 ընտանիքներից 190-ը 5—12 երեխա ունեցող ընտանիքներ են (52,92 տոկոս), իսկ մինչև չորս երեխա ունեցող ընտանիքների թիվը հասնում է 140-ի (38,99 տոկոս) և նոր ամուսնացած ու անզավակ ընտանիքների թիվը 25-ի (8,09 տոկոս)։ Ինչպես երևում է, բազմազավակ ընտանիքների քանակը, այն էլ չորս երեխայից բարձրը՝ մեծամասնություն է կազմում։

Անձնակազմի տեսակետից ամենամեծ ընտանիքներն ուղիղ գծով երեք սերունդ ունեցողներն են (ծնողներ>զավակներ>թոռներ)։ Այստեղ անձերի թիվը երբեմն հասնում է մինչև 15-ի։ Այս կարգի ընտանիքները, մեծ մասամբ, ներկայացնում են ամուսնացած եղբայրների անհատական ընտանիքների համակեցությունը։ Սրանց մի զգալի մասի համակեցությունը տեղի է ունենում «տրոհված» վիճակում, երբ եղբայրները ոչ թե մի հարկի տակ են բնակվում, այլ տարբեր տեղերում, նրանցից մեկը կամ մեկից ավելին, պրոֆեսիայի թելադրանքով, միայնակ կամ իր ընտանիքի հետ ապրում և աշխատում է մի այլ վայրում։ Այժմ նման ընտանիքներում յուրաքանչյուր անհատական ընտանիք իր վաստակով փոխադարձ օգնության մեջ է գտնվում մյուսի հետ։ Բաժանքը սրանց մոտ երբեմն տեղի է ունենում տարերային կարգով, առանց ձևականությունների և առանց «բաժանքի թղթի», որովհետև մասնավոր սեփականության շրջանին ներհատուկ այն տնտեսական հիմքերը, որոնք պահանջում էին պաշտոնական վավերագրեր, այժմ այդ կարգի ընտանիքներում մեծ մասամբ բացակայում են։ Բաժանմամբ ընտանիքը թողնողները բաժանելի անշարժ գույքը թողնում են մայր ընտանիքում մնացողներին։ Այդպիսիներն այդ երևույթը բացատրում են երախտապարտության զգացմունքով, այն պատճառով, որ մայր ընտանիքն իր նյութական օգնությամբ բաժանվողին որևէ պրոֆեսիայի է արժանացրել։

Ուշագրավ է ազգակցության կամ խնամիության գծով որոշ ընտանիքների խմբավորումը, ավելի ճիշտ՝ վերախմբավորումը, որտեղ սկզբունքը փոխադարձ օգնությունն է։ Այսպես խմբավորվում են, օրինակ, արու զավակ չունեցող ծերացած ծնողներն իրենց փեսաների ընտանիքների կամ այրիացած, ամուսնալույծ, աղջիկների ընտանիքների հետ և այլն, փոխադարձ համաձայնությամբ մեկի կամ մյուսի հարկի տակ։

Այս խմբավորվող ընտանիքները խորապես կոլեկտիվիստական բնույթ ունեն, եթե նկատի ունենանք մի կողմից աշխատանքի ընդունակությունը

[1] «ՀԽՍՀ բնակավայրերն ու ազգաբնակությունը», Երևան, 1936, էջ 7—8։

կորցրած ծեր ծնողների վիճակը և մյուս կողմից՝ աշխատող մոր երեխաների խնամքն ու դաստիարակությունը, այդ իսկ ծերերի ձեռքով։

Ինչպես հոր, նույնպես և մոր համար աղջկա խնամքի տակ գտնվելը, որ հայկական հին ընտանիքների համար միանգամայն անծանոթ է եղել, մեծապես նպաստել է աղջկա և տղայի միջև անդունդ ենթադրող սովորույթների վերացման պրոցեսին։

Այդ նոր բնույթի ընտանիքներում տան գլխավորի հարցը որոշվում է ըստ կողմերի հայեցողության։ Բայց բանն այդպես չէ բնական աճմամբ առաջացած ընտանիքներում։ Այստեղ, եթե ընտանիքի տարիքավոր տղամարդը ողջ է, նա էլ տան գլխավորն է, իսկ եթե նա մեռած է, փոխարինում է նրա այրին կամ տղան։ Սովորաբար նորահարսներին և աղջիկներին գյուղական Սովետները տան գլխավոր չեն գրանցում, թերևս նրանք լինեն փաստական ղեկավարներ իրենց ընտանիքներում։ Այսպես, օրինակ, վերև հիշատակված Բամբակաշատ գյուղի 1950 թ. տվյալներով 359 ընտանիքներում տան տղամարդ գլխավորների թիվը հասնում էր 255-ի (71 տոկոս), այրի կանանցը՝ 90-ի (25 տոկոս) և տղաներինը՝ 14-ի (4 տոկոս)։ Կամ Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի 1951 թ. տվյալներով 130 ընտանիքներում տան տղամարդ ղեկավարների թիվը հասնում էր 78-ի (60 տոկոս), այրի կանանցը՝ 49-ի (37,7 տոկոս) և տղաներինը՝ 3-ի (2,3 տոկոս)։

Ամուսնություն և հարսանիք.— Սոցիալիստական նոր հարաբերությունների արմատացման միջոցով ընտանեկան կենցաղից աստիճանաբար վերացան դերդաստանական հարաբերությունների մնացուկները։ Դրանով հայկական գյուղական ընտանիքներն աստիճանաբար թոթափեցին տնօրինման պատրիարխատական տրադիցիաները։

Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումից հետո, երբ արտադրական աշխատանքներում արդեն լայնացրել էին երիտասարդության երկու սեռի ներկայացուցիչների փոխադարձ շփման հնարավորությունները, հակառակ հին հասարակության մեջ ամուսնության գծով տնտեսական գործարքի, մեր ժամանակներում երիտասարդների ամուսնական ընտրությունը դարձել է նրանց իրավունքը։ Նախաամուսնական շրջանում այդ դրսևորվում է աշխատանքային և հասարակական ու տոնական հանդեսների վայրերում։ Ազատ ընտրությունը հիմնականում որոշում է ամուսնությունը, առանց կողմնակի միջամտությունների։ Այնուհետև ծնողների և ամուսնացողների ու կողմերի բարեկամների միջև դրսևորվող ծեսերը, որոնք հնում հետապնդում էին գերազանցորեն տնտեսական նպատակներ (գլխագին, օժիտ, հարսնտես, փեսատես, և այլն), այժմ պահպանվում են հիմնականում խնդրի բարոյական ու ձևական տեսակետից։ Այստեղ շոշափվում են նաև տնտեսական հարցեր, որոնք անցյալից նրանով են տարբերվում, որ ուղղված են ամուսնացող զույգի նյութական պայմանները բարելավելուն, և ոչ թե ծնողների անձնական օգուտը որոնելուն։

Փոխադարձ սիրո հիման վրա երիտասարդների ամուսնության ցանկությանը հետևում է «աղջիկ ուզելու» պրոցեսը։

Տղայի կողմից ներկայանում են «խոսք ուզող» խնամախոսները, որոնք հաճախ լինում են գյուղի առաջավոր մարդիկ։ Առաջին այցելությունը երբեմն ձևական մերժման է արժանանում, եթե աղջկա ծնողները դեմ չեն, կամ դեռևս հարցեր ունեն պարզելու։ Այս դեպքում աղջիկը կարող է ներկա գտնվել կամ չգտնվել։ Խնամախոսների երկրորդ այցելության ժամանակ աղջկան կանչում

են մյուս սենյակից կամ հարևանի տնից, որը հանդիսավոր լարվածության մեջ, հայտնում է իր համաձայնությունը։ Ծնողների պատիվը բարձր պահելու այս եղանակները Հայաստանի կոլտնտեսություններում և քաղաքներում համընդհանուր են։ Այս դեռ չի նշանակում, թե ծնողները կարող են դեմ չլինել անգամ աղջկա ընտրությանը և աղջիկը, մեծ մասամբ, ենթարկվում է նրանց կամքին։

Շատ անգամ պատգամախոսների հետ տղջկա տունն է գալիս և տղան, որ հայկական գյուղական ամուսնության պատմության մեջ միանգամայն նոր երևույթ է։ Որոշ երիտասարդներ, երբեմն նույնիսկ ծեսերին նշանակություն չտալով, այդ բոլոր հարցերն անձամբ են լուծում։

«Խոսք տալուց» հետո կողմերը որոշում են նշանադրության օրը։

«Խոսք տալու» սովորույթի մեջ տակավին պահպանված են աղջկա ծնողների կողմից իրենց աղգականներին «հարցնելու», նրանց հետ խորհրդակցելու և նրանց կարծիքն իմանալու սովորության մնացուկները։ Բայց դրանք որոշ չափով ձևական լինելուց դադարում են այնտեղ, ուր ամուսնությունը գյուղից դուրս տեղի ունենալու հետևանքով կողմերի միմյանց հետ անծանոթ լինելը նոր ընտանիք կազմողների համար զգուշավորություն և լրջություն է պահանջում։

Նախապես կայացած որոշման համաձայն տղայի ծնողները, սրանց մերձավորների ու փեսացուի հետ նվագախմբով գալիս են աղջկա տունը։ Տեղ-տեղ, ինչպես, օրինակ, Արարատյան դաշտի շրջաններում, Կոտայքում, Աշտարակում և այլուր, պահպանված են այդ այցի ամբողջ ճանապարհին շարանպարի ու կենտապարերի կատարումը, ուրախ բացագանչություններով։ Որոշ դեպքերում ամբողջ այցելուները, հանդիսատեսության եկած պատանիների հետ միասին, մի ամբողջական երկար շարքով, ձեռք-ձեռքի բռնած, պարելով կամ զույգ-զույգ կաքավելով առաջ են ընթանում։

Խնամիների տանը նրանք տեղավորվում են խնճույքի սենյակում։ Հարսնացուն, սովորույթի համաձայն, չի ղիմավորում, հյուրերին չի երևում, այլ նախապես տեղավորվում է մի այլ բաժանմունքում, որտեղ նրան հագցնում են հատուկ հարսանեկան հագուստը։

Նշանադրման հանդեսն սկսվում է այն մոմենտին, երբ քավոր «վկայի» կամ թամադայի առաջնորդությամբ իր առանձնարանից հարսնացուին նրա ընկերուհիները կամ նորատի հարսները «առաջ են բերում», այսինքն՝ ներկայացնում են սկեսրանց կողմից եկած բարեկամներին։ «Առաջ եկողները» և հարսնացուն գլխի խոնարհումով ողջունում են հյուրերին, որոնք բարձրաձայն պատասխան ողջույն տալով առաջարկում են հարսին տեղավորել, հակառակ անցյալում բացառող սովորույթների, փեսայի կողքին, և խնճույքի սենյակի պատվավոր տեղում։ Սովորույթի համաձայն աղջիկը նստում և բուն խնճույքն սկսվում է այն ժամանակ միայն, երբ փեսան իր ձեռքով հագցնում է նշանի մատանին կամ թևին է կապում ձեռքի ժամացույցը։

Այնուհետև, թամադան առաջարկում է նախ ամուսնացողների, ապա նրանց դաստիարակ (և «պատճառ») ծնողների և այլոց կենացը, որպիսի ձևով նշանդրեքի խնճույքը հարատևում է, ըստ կողմերի հայեցողության, 5—8-ժամ։

Կոլտնտեսային գյուղացիության մեջ նշանադրության գծով առաջ են եկել նոր սովորույթներ և դրա համար հատուկ ծեսեր չեն կատարվում, այլ որոշ մարդկանց գիտությամբ տղայի ծնողները նշանը հանձնում են աղջկան։ Այս

գործում հիմնական գերը խաղում են կողմերի ընտանիքները, որտեղ միջնորդը միայն ձևական կողմերն է դրսևորում։

Ժամանակի տևողության իմաստով նշանադրության ու հարսանիքի միջև հաճախ սահմանները ջնջվում են և նշանն ու հարսանիքը միաժամանակ են կատարվում։ Տղայի կողմից հարսին նշանագրելու եկող անձնակազմը .շատ տեղերում այլևս չի կատարում շարանպարի ծեսերը։ Խնճույքը երբեմն ընթանում է առանց հատուկ նվագախմբի, բայց մասնակիցների խմբական ու անհատական երգերով, որտեղ, ի դեպ, նաև հարսնացուն, հակառակ հին տրադիցիաների, երգում է և ակտիվորեն մասնակցում ուրախությանը։

Ժամանակակից նշանադրման օրից մինչև հարսանիքը տևողության կրճատումը մերժումն է այն ամենի, երբ անցյալում վեց ամսից մինչև երկու տարի նշանված մնացող զույգի համար բազմաթիվ ծեսերի կատարման ու նվերների հայթայթման անվան տակ տնտեսական հարցեր էին դրսևորվում։ «Կանչ»[1] պահանջող հարսնտեսները գրեթե վերացված են։ Վերացված են նմանապես գլխագինն ու սրա հետ կապված բոլոր սովորությունները։

Նշանից առաջ և նշանադրության ու հարսանիքի միջև ընկած կարճատև ժամանակամիջոցում աղջկա ծնողները նախապատրաստում են աղջկա օժիտը, որի ժամանակակից բնույթի մեջ, ըստ էության, թաքնված է աղջկա անձնական սեփականության ու վաստակի տնօրինման անխախտ իրավունքի կատեգորիան։ Այդ իսկ առումով էլ «օժիտ» տերմինը կորցրել է իր հին իմաստը, պահպանելով միայն ձևը։ Եթե աղջկա օժիտը հին Հայաստանում հանդիսանում էր ամուսնությունն ապա։ովելու նախապայմաններից մեկը, ապա մեր պայմաններում այն իրենից ներկայացնում է անձնական տնտեսության միացումն ամուսնու տնտեսությանը՝ բարեկեցիկ կյանքն ապահովելու նպատակով։ Այդ բանով պետք է բացատրել հաճախ աղջկա տարեկան վաստակած աշխատանքի արդյունքն ամուսնացողների տունը տեղափոխելը։

Օժիտը ոմանց մոտ բաղկացած է լինում աղջկա անձնական հագուստներից, իր ձեռքով պատրաստված ձեռագործներից ու բանված բարձիկներից, այնուհետև ճամպրուկից, կամ սնդուկից, ոմանց մոտ՝ կարի մեքենայից, երբեմն կամողից (որ գյուղական վայրերում ամենատարածված կահույքներից մեկն է), ոմանց մոտ՝ անկողնուց, մահճակալից, անձնական դրադարանից. ուրիշների մոտ, եթե նրանք առողջապահության, գյուղատնտեսության և անասնապահության գծով մասնագետներ են, իրենց մասնագիտության վերաբերյալ գործիքներից ու սարքերից։

Սրանց մի զգալի մասը, որ պատրաստվում է աղջկա ձեռքով և արտա-

---

[1] Հարսնտեսի, փեսատեսի և հարսանեկան հանդեսի ավարտման ժամին վրա էր հասնում մի մոմենտ, երբ ընդունած պատիվների համար պետք էր նյութապես վարձատրություն լինել տանտիրոջը։ Այդ պահին ճարտարախոս մեկին նշանակում էին «կանչող»։ Վերջինս խնճույքի յուրաքանչյուր մասնակցից ստացած նվերի՝ դրամի, շորեղենի, անասունի, կամ հացահատիկի մասին բարձր ձայնով կանչում էր ի լուր ամենքի, հանդիսակիցների հետ դիալոգ ստեղծելով.

— Շեն մնա ով։

— Ով՝,— պատասխանում էին հանդիսականները։

— Շեն մնա, (օրինակ), հարսի քավորը, որը նվիրում է հարսի համար մի դեյրացու և այս շեն տան համար՝ երկու փութ ցորեն։

— Շեն է ու շեն մնա,— պատասխանում էին ներկաները։

հայտում է նրա շնորհքը ամուսնու տանը ծառայում է իբրև նրա ճաշակը և կուլտուրան ցուցադրող միջոց։

Կասկածից վեր է, իհարկե, որ օժիտի ժամանակակից ձևի մեջ իսկ նկատելի է հնի մնացուկը։ Բայց հին սովորույթներից բավական ազատագրված և ամուսնության ակտի ժամանակակից հասկացողություններն առավել ճիշտ ըմբռնած երիտասարդների համար, երբ նրանք իրենց նյութական ապահովման միջոց են համարում ֆիզիկական և մտավոր աշխատանքը, այլ ոչ թե աղջկա օժիտը, ինքնին հասկանալի է շատերի կողմից արդի պայմաններում դրա վրա ոչ միայն այլևս ուշադրություն չդարձնելը, այլև վիրավորական համարելը։

* * *

Երբ նշանվածներին մի ընտանիքում միավորելու համար որոշ նախապատրաստություններ են կատարվում, սկսվում է հարսանիքը՝ այն տոնահանդեսը, որը ընտանեկան հարաբերությունների սկիզբն է նշանակում։

Հարսանիքի նախապատրաստությանը նախորդում է քավորի ընտրությունը։ Այդ օրերին ընտրվում են տղայի համար նրա ընկերներից 1—2 «մակար»[1], և աղջկա համար իր ընկերուհիներից մեկ-երկու «հարսնաքույր»-, որ նրանց ուղեկիցներն են լինում հարսանեկան հանդեսի բոլոր պրոցեսներում։ Երկու երեք օրում նախատեսվում են տնտեսական բոլոր պետքերը, հարդարվում են սենյակները։ Այս գործերին մասնակից են դառնում հարսանքատերերի մերձավորները։ Արդեն սովորական դարձած ձեռագիր կամ տպագրված հրավիրատոմսերով մեկ օր առաջ հրավիրվում են հարսնեորները։

Հարսնառ գնալուց առաջ փեսան սափրվում և հագնվում է առանց ծեսերի։ Բացառություն է կազմում Շիրակի բարձրավանդակը (Կարնո հայեր), ուր տակավին պահպանվում են «հալավ հագցնելու» ծեսի մնացուկները։ Փեսայի և քավորի կուրծքը զարդարում են վարդաձև, կարմիր կտորից պատրաստված զարդով, որը փոխարինում է հնում հայտնի և մոգական առում ունեցող ժապավենաձև՝ կրծքին խաչաձև կապվող, կամ թևին փաթաթվող «կանաչ ու կարմիր»-ին («կոսբանդ», «ուսպանդ»)։

Հակառակ այն բանի, որ հարսանեկան տոնահանդեսում փեսայի հետ կապված ծեսերը մեծ մասամբ վերացված են, աղջկա հետ կապված ծեսերը, ընդհակառակն, դեռևս ունեն որոշ կենսունակություն։ Դրանք սակայն, որ մեծ մասամբ ուրախառիթ երևույթներ են, ձգձգում են հարսանեկան հանդեսը։ Այսպես, օրինակ, հարսը դեռևս հարսանեկան-տոնական զգեստը չհագած հյու-

---

[1] «Մակար» տերմինի տակ անցյալում հասկացվում էին. ա. աղջիկ առևանդող տղային ուղեկցող և նրան պաշտպանող ընկերները։ բ. Ֆեոդալական Հայաստանում «թագավորին» (ամուսնացող երիտասարդին) շրջապատող ամուրի ընկերներից ամեն մեկը՝ հարսանիքի ժամանակ։ գ. Հարսնառի մասնակիցները։ դ. Հարսանիքի հրավիրված բոլոր հյուրերը։

«Մակար»-ի հոմանիշն է «ազապչարի» տերմինը, որ կազմված է արաբերեն azab «ամուրի» և թյուրքերեն «cari» «ղորք» բառերից։ Կա և «ազապախպեր» տերմինը, որը կազմված է արաբերեն azab «ամուրի» և հայերեն «եղբայր» բառերից։ Մեր օրերում «մակարի» և մյուս տերմինների հին իմաստը չի գիտակցվում։ Մակարները պարզապես ուրախակից ընկերներ են։

[2] «Հարսնաքույր»-երը հարսին ուղեկցող և նրան զբաղեցնող ընկերուհիներն են։

բասիրվում է մերձավորների տանը, հարսնաքույրերի հետ միասին, որ «հարսին դուրս հանել» է կոչվում։ Երբ հարսնևորները հավաքվում են, նվագախմբով քավորին ու կնոջը տեղափոխում են հարսնեատունը։ Քավորի գլխավորությամբ հարսնառը փեսայի և մակարների հետ միասին շարժվում է դեպի աղջկա տունը։ Հարսնառի մասնակիցների մեծ մասը, մանավանդ կանայք և երիտասարդները, ամբողջ ճանապարհին շարանպարով ու կենտպարերով են ընթանում։ Պարի առաջնորդը ծածանում է թաշկինակը։

Որոշ վայրերում, ինչպես, օրինակ՝ Արարատյան դաշտի շրջաններում պահպանված է քավորի բերած նվերները սկուտեղով քավորկնոջ կամ սրանց կողմից մի աղջկա գլխի վրա պահած՝ ամուսնացող աղջկա տունը տանելու և այնտեղից էլ տղայի տունը տանելու սովորույթը։ Այստեղ շարանպարը, երբ մտնում է աղջկա բակը, շրջափակում է սկուտեղը գլխին պարող քավորկնոջը և վեր է ածվում կլոր պարի։ Աղջկա կողմը նվերի սկուտեղն ընդունում և նվեր է տալիս քավորկնոջը։ Պարահանդեսը դադարում է, երբ նվագախմբի հետ հարսնառի մասնակիցների մի մասը մեկնում է հարսին հյուրասիրող մերձավորի տնից հոր տունը տեղափոխելու։ Մնացողները փեսայի հետ, ներսում, աղջկա կողմի թամադայով սկսում են խնճույքը։ Հոր տունը տեղափոխելուց հետո քավորկնոջ ու հարսնաքույրերի ձեռքով հարսին զգեստավորում են առանձին սենյակում։ Երբեմն զգեստավորմանը ուղեկցում է նվագի հատուկ գովքի եղանակը։ Կանայք և աղջիկները գովքի երգեր են երգում և որոշ վայրերում երգ ու նվագի տակտով ծափ են տալիս։ Հարսը հագնում է փեսայի բերած հարսանեկան սպիտակ ու երկար շրջազգեստը։ Տեղ-տեղ, մանավանդ քաղաքներում, դեռևս պահպանվում է սպիտակ քողը և մոմից և կամ այլ նյութից պատրաստված պսակը։ Երբեմն պսակ ու քող են կրում նաև հարսնաքույրերը։ Հարսի զգեստավորումն ավարտելիս, քավորը փեսային առաջնորդում և բերում, միավորում է հարսի հետ, որից հետո զույգը տեղափոխվում է խնճույքի սենյակը և նստում պատվավոր տեղը։

Աղջկա հետ կապված այս ծիսական արարողությունների պահպանումը, անշուշտ, բացառում է սոցիալական հին առումները և կրոնական բովանդակությունը։ Դրանք, ընդհակառակն, արդի պայմաններում հարսանեկան հանդեսին առանձին գեղեցկություն և նազանք են հաղորդում։ Այդ արարողություններով ուրախանալով, աղջկա տան հարսանեկան հանդեսը տևում է 2—3 ժամ։ Դրանից հետո բարձրացվում են հրաժեշտի բաժակները, բարոյադաստիրակչական ճառեր արտասանելով. Աղջկա հրաժեշտից հետո նրա մայրը քավորկնոջը և մի քանի պարող կանաց մի-մի դաֆ։ և ափսեներ է տալիս իբրև հարսնացուի հարստության ու բախտավորության սիմվոլներ։ Այդ սիմվոլները բարձր պահած՝ կենտպարերով և մյուսները դարձյալ շարանպարով շարժվում են դեպի փեսայի տունը։

Հարսնառին միշտ դիմավորում է տղայի մայրը և համբուրելով հարս ու փեսային, ընդունում է ներս։ Մոր այդ համբույրի ծեսից հետո չափազանց աշխույժ խրախճանքի ու խաղի բնույթ է ստանում որոշ շրջաններում պահպանված՝ տղայի ծնողների գոտեմարտի տեսարանը, որ հրահրվում ու խրախուսվում է հարսնևորների կողմից։ Սովորույթի համաձայն կինը պետք է տապալի ամուսնուն, հենց ամուսնացող զույգի առջև, կանանց նկատմամբ հնազանդության պահանջով, որ մատրիարխատական կարգերի մնացուկ է հանդիսանում։ Ներս մտնելիս տղան տան շեմի վրա ոտքով խփում և կոտրում

է իրենց կամ աներանց տնից կաբավոդների ձեռքով տեղափոխված ափսեներից մեկը, որ հնում ուժի ու իրավունքի սիմվոլ էր համարվում և որը նույնպես պատրիարխատական բնույթ ունի։

Ներսում հարսը չի նստում, մինչև որ տնեցիների գլխավորներից նվերներ («նստելե») չի ստանում։ Եվ «նստելե»-ով վերջանում է ծեսերի շարանը։ Դրանից հետո խնճույքն ընթանում է փեսայի կողմից ընտրված թամադայի կառավարմամբ, մինչև կեսգիշեր կամ մինչև առավոտ տևողությամբ։

Ինչպես պարզ երևում է, հայկական ժամանակակից գյուղական հարսանիքը հնից ժառանգել է գլխավորապես խրախճանքի և տոնականության բնույթի ծեսերը, մերժելով նրա այն բոլոր տարրերը, որոնք հարսանիքը ծանրաբեռնում էին կրոնաբարոյական ու թովչական բազմաթիվ արարողություններով։

Եթե մինչև 20-րդ դարի սկզբները, երբ հայկական բուրժուական ազգի կազմավորումը դեռևս լիակատարության չհասնելու հետևանքով որոշ ծայրամասային գավառներում և հայկական գաղթավայրերում հարսանեկան տոնախմբության որոշ ձևեր միանմանեցման չէին հասել, տուր, օրինակի համար, մեծամասնության մեջ փեսան պետք է մասնակցեր հարսնառի երթին, իսկ մյուսների մեջ ընդհակառակն, ապա հայկական սոցիալիստական միասնական ազգության մեջ համազգային կուլտուրայի զարգացման արդյունք պետք է դիտել այդ և շատ այլ տարբերությունների վերացումը։ Դրանով ժամանակակից հարսանիքն իր ամբողջական առումով ոչ միայն գյուղերում, այլև առհասարակ, միանմանեցման է հասել։ Եթե մի կողմ դնենք այն զվարճալի տեսարանները, որոնք ամբողջապես կատարվում են ամուսնացողների հայրական տների կամ գյուղերի միջև ընկած տարածության վրա, կտեսնենք, որ նոր հարսանիքի և սովորական — ընկերական խնճույքի միջև նախկին սահմաններն իրոք արդեն վերացված են ոչ միայն ընթացքի ձևերի, այլև տևողության իմաստով։

Հարսանիքն անցյալում միակողմանիությամբ էր օժտված. աղջկա հոր տանը տեղի ունեցող հարսանեկան հանդեսը փաստորեն վեր էր ածվում սոսկական հրաժեշտի արարողության՝ բազմաթիվ ծեսերով։ Դրանք կապված էին աղջկա կողմից հայրական տունը թողնելու հետ, որը գործնական կյանքում ենթադրում էր կնոջ բացարձակ չխոսկանությունը և հնազանդությունը, ընտանեկան կյանքում մինչև 2—3 երեխա ունենալը համարյա լիակատար իրավազրկությունը։ Այդ էր պատճառը, որ աղջկա հայրական տանը տեղի ունեցող հարսանիքը վեր էր ածվում մի տեսակ սգո հանդեսի։ Երգվում և նվագվում էին լացի ու պանդխտության, սոցիալական տրտունջին հատուկ երգ ու եղանակներ[1]։ Աղջկա ծնողները պարզ գիտակցությամբ նրան հլու հնազանդ ծառայելու

[1] Անցյալ դարի վերջերին հայ ազգագրագետները հարսանեկան սովորությունները նկարագրելիս գրի են առել նաև այդ տխուր երգերը, որոնցից պարզ երևում է ոչ միայն ամուսնացող աղջկա կամքի բացակայությունը, այլև գլխագնով նրան մարդու տալու դժբախտ սովորությունը։ Բերում ենք դրանցից երկու երգի հատվածներ, ասվածն իլյուստրացնելու նպատակով։

ա.— ... Մարիկներ խափեցին մե թոփոմ շամով,
Քուրիկներ խափեցին մե ձեռրմ հինով.
Ախպորը խափեցին մե մահուդ չուխով
Մի լա, մարիկ, մի լա, էկեր կը տանին.
Օխան ախպոր մե քուրը ֆոկեր կը տանին։

էին դրդում և առհասարակ հրաժեշտի ժամին բոլոր մերձավորներն էլ արտահայտվում էին աղջկա համար հնազանդության ոգով։

Ռևոլյուցիայից հետո, երբ կնոջ ընտանեկան իրավահարաբերությունների մեջ մտան աննախընթաց փոփոխություններ, հայկական հարսանիքի միակողմանիությունն աստիճանաբար վերացավ. այն գրեթե կիսով չափ կատարվում է աղջկա և կիսով չափ՝ տղայի տանը, երկու դեպքումն էլ լիակատար նույնիմաստ «հարսանիք» հորջորջմամբ, յուրաքանչյուրի տանը իրենց կողմից ընտրվող կառավարիչով։

Ընտանեկան հարաբերություններ.— Սովետահայ գյուղական տան բոլոր անդամների փոխհարաբերություններն ազատ մարդկանց հարաբերություններ են։ Ամուսինների փոխադարձ հարաբերությունների մեջ հիմնականում լուծված է տարբեր սեռերի նկատմամբ հավասարության սոցիալիստական սկզբունքը։ Չնայած հայկական հին սովորության, որ կինն ամուսնության դեպքում պետք է ընդուներ ամուսնու ազգանունը,— մի բան, որ որևէ բացառություն չէր կարող ենթադրել,— այժմ ամուսնացող աղջիկներն այդ բանի ընտրության մեջ ևս ազատ են։ Լինում են շատ դեպքեր, երբ այս կամ այն պատճառով կանայք պահում են իրենց հայրական ազգանունը։ Եթե բացառություն դիտենք ավագ սերնդի սահմանափակ թվով կանանց, որոնք հնից իրենց հետ բերել են հին կենցաղից մի շարք մնացուկներ, ապա նոր սերնդի մեջ չեն կրկնվում գլխակապման և քթկալ կապելու հին ձևերը։ Հիմնականում վերացված է նաև չխոսկանությունը։ Բայց որոշ ռայոններում նորահարսները չխոսկանությունը դիտելով իբրև մեծերին մեծարելու նշան, վերջիններիս դրդումով վերացնում են

Հոր խափեցին, մոր լացուցին,
Ախպոր լյուլեն կոտրտեցին,
Քրոջ վալեն պատոտեցին.
Մի լա, մարիկ, մի լա, էկեր կը տանին,
Օխտն ախպոր մե քուրը ջոկեր կը տանին։

— Էրթամ էրթամ հեռու տեղեր հեռանամ,
Էփոր մարիկս միտքս բյնի, մեջքս բռնեմ կրսանամ,
Մի լա, մարիկ, մի լա, էկեր կը տանին,
Օխտն ախպոր մե քուրը ջոկեր կը տանին։
Մի լա, մարիկ, մի լա, լալողը ես եմ,
Ղարիպ էրկրները կորողը ես եմ։

(Տես Ե. Լալայան, Ջավախք, Ա. հատոր, Թիֆլիս, 1897, էջ 141)։

բ.— ... Ջհերիկ խարեցին կուռե մե դինով,
Ջմերիկ խարեցին թոփիկ մե շիլով,
Ջաղրեր խափեցին ջուխտակ մե ջղմով,
Ջքուրիկ խարեցին մատիկ մե հինով.
Ջղրամի հանդուրց արձրկեցին,
Ջաղջիկ մամուց ջոկեցին։
Մարիկ, մի ավլի դտախտիկ,
Որ չավրի քու աղջկա հետիկ,
Թրդ մնա քի նմուշիկ,
Որ հանչս քու սրտի հասրաթիկ։
Ջչամիչ մաղով մաղեցին,
Աղջկա ջերեր լցեցին,
Ջղարիբ համրա դրեցին։

(Տես Բենսե, Բուլաներիս կամ Հարբ դավառ, «Ազգագրական հանդես», գիրք Ե., Թիֆլիս, 1899, էջ 106)։

հարսնանալուց մի քանի շաբաթ կամ մի քանի ամիս հետո։ Այս պայմաններում, ահա, հայր դարձած երիտասարդն իր հոր ու մոր ներկայությամբ ազատ է՝ անունը տալով կանչելու կնոջն ու երեխաներին. հարսն իրավասու է տան մեծերի ներկայությամբ տալու ամուսնու անունը։ Տղաներն ու հարսները տան մեծերի ներկայությամբ ազատ են ուրախանալու, երեխաների հետ ուրախ խաղեր սարքելու, նրանց գրկելու, փայփայելու համար, և այլն,— իրավունքներ, որոնք բացառված էին հին ընտանիքներում։ Գյուղական ընտանիքն առանց սեռերի ու հասակների խտրության, միասին է ճաշում, որին նույնպես անծանոթ էր հին ընտանիքը։ Փոխված են ժառանգության հարցի հետ կապված նորմաները։ Սակայն բացառությամբ՝ տղան ու աղջիկն ինչպես իրենց էությամբ, այնպես և ժառանգելու իրավունքով հավասար են ճանաչվում։ Աղջիկ կամ տղա ծնվելիս ուրիշների շնորհավորանքն իր մեջ խտրականության տենդենց չի պարունակում։ Հողի մասնավոր սեփականության վերացման հիման վրա իրավական այդ հին նորմաները հիմնականում լիկվիդացված են, ինչպես ընտանիքում, այնպես և արյունակցական «ազգի» մեջ։

Բարձրացել է կնոջ իրավագիտական-օրենսգիտական աստիճանը, որը գիտե պայքարել ընտանեկան այն անարդարությունների դեմ, որոնք երևան են գալիս հետամնաց մարդկանց մոտ։ Եվ դա պատահական չէ, որովհետև կոլտնտեսուհիների զգալի մասը ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթության տեր լինելով, գրականության, մամուլի և կուլտուրական այլ սպասարկումների (կինո, թատրոն, և այլն) միջոցով բավական իրավասու է ընտանեկան իրավահարաբերական նորմաներին։ Այդ բանի շնորհիվ նա առաջին հերթին ՁԱԳՍ-ի միջոցով աղայից ամուսնության օրինականություն է պահանջում։ Նա օգտվում է ապահարզանի իրավունքից, ապահովվում է բնակարանով, ալիմենտով և երեխաներին դաստիարակելու այլ պայմաններով։ Լինելով տնտեսապես այնքան ինքնուրույն, որքան յուրաքանչյուր տղամարդ. կոլտնտեսուհին երեխաների դաստիարակությունն ու նրանց նյութական պայմաններն ապահովում է հիմնականում յուր աշխատանքի վաստակով։ Ոչ միայն կնոջ, այլև ընտանիքի աշխատունակ բոլոր անդամների համար էլ ազատ հարաբերություններն ապահովվում են տնտեսական կախումից ազատ լինելու շնորհիվ։ Ամուսինները միմյանցից ոչ միայն չունեն տնտեսական կախվածություն, այլև ի տարբերություն հնից, նյութական բարիքներ ստեղծելու և իրենց պրոֆեսիայի գծով որակավորվելու նպատակով նրանց միջև մրցում է տեղի ունենում։ Կինը չի ուզում զարգացող կյանքից և կուլտուրայից ետ մնալ այն պարագային, երբ իր ամուսինը զանազան պրոֆեսիաներ է ձեռք բերում։ Այդ մրցումն ընտանիքի նյութական պայմանների և կուլտուրայի զարգացման գործում լուրջ ազդակներից մեկն է, որը գյուղական ընտանիքին մղում է դեպի քաղաքային ընտանիքի կուլտուրական մակարդակը։

Կուլտուրայի բարձրացման շնորհիվ, իհարկե որոշ բացառությամբ, վերացել են ազգակցական, խնամիական այնպիսի հարաբերությունները, որոնք հնում ծնունդ առնելով մասնավոր հողօգտագործման հետևանքով, սնում էին ստեղծվող հակասություններն ընտանիքների միջև։

Փոխվել են և ուշադրության արժանի են աշխատանքի բաժանման եղանակներն ընտանիքներում ու կոլտնտեսություններում։

Մինչև 1920-ական թվականների վերջերը, երբ հայկական գյուղը մեծ մասամբ մենատնտեսային կարգեր էր ապրում, աշխատանքի բաժանումն ընտա-

նիքում հիմնովին կատարվում էր ըստ սեռի բաժանման սկզբունքի։ Կոլտնտեսային կարգերի առաջին տարիներին այդ տենդենցը որոշ բացառությամբ դեռևս պահպանվում էր նաև հանրային աշխատանքների բնագավառում։ Սկզբնական շրջանում, եթե դրա բուն պատճառը արտադրության կազմակերպման հին եղանակն էր, համենայն դեպս, նշանակալից դեր էին խաղում նաև կենցաղային տրադիցիաները։

1930-ական թվականների վերջերին, երբ հայկական գյուղատնտեսական աշխատանքը հենվում էր մեծ մասամբ մեքենայացված տեխնիկայի վրա, արագացավ աշխատանքն ըստ սեռի բաժանման սկզբունքից սեռերի միջ խտրություն չճանաչելու սկզբունքի պրոցեսը։ Իսկ Հայրենական պատերազմի շրջանում օր ավուր փշրվում էին հին նորմաները։ Աշխատանքային բոլոր ֆրոնտներում կանանց լիակատար մասնակցությունը և սխրագործությունները ցույց տվեցին, որ իգական սեռը միանգամայն ընդունակ է մերժել աշխատանքն ըստ սեռի բաժանելու հին մեթոդները։ Դրա օգտին են խոսում հետպատերազմյան բոլոր տարիների աշխատանքային փորձերը, առանձնապես գյուղատնտեսական մեքենաներով հագեցված շրջաններում, որտեղ աշխատանքի հերոս կանանց թիվը չի զիջում նույն ասպարեզում աշխատող տղամարդկանց թվին։

Եթե կոլտնտեսային արտադրության մեջ աշխատանքի բաժանումը կատարվում է սեռերի մեջ խտրություն չճանաչելու սկզբունքով,— ուր անկասկած, կիրառվում է կնոջն ուժից վեր աշխատանքի չնշանակելու օրենքը,— ապա ընտանիքում աշխատանքի բաժանումը տակավին կատարվում է հիմնականում ըստ սեռի բաժանման սկզբունքի։ Դրա պատճառն այն է, որ ընտանեկան կենցաղում աշխատանքի կազմակերպման հին ձևերի փոփոխությունները ավելի դանդաղորեն են կատարվում, քան հանրային հասարակական կյանքում։ Տնամերձ հողամասի մշակման անհրաժեշտությունն ընտանիքին թելադրում է երկրագործական հին տ մանր գործիքների պահպանումը, հետևապես այդ աշխատանքները տղամարդու ձեռքով կատարելու տրադիցիայի պահպանումը։ Դեռևս հասարակական խոհանոցների և լվացքատների բացակայությունը թելադրում են թոնրատուն-խոհանոցի և տնային լվացքի հին ձևերի պահպանումը։

Որ ընտանեկան կենցաղում աշխատանքային տրադիցիաները նշանակալից դեր են խաղում, ցույց են տալիս հետևյալ օրինակները։

Հայտնի է, որ ընտանիքում հաց թխելը, կերակուր պատրաստելը, հագուստեղեն կարելը և այլն, հայ տղամարդու համար ամոթաբեր բաներ են։ Բայց երբ այդ նույն տղամարդը կոլտնտեսային փոում հաց է թխում, խոհանոցում դաշտային աշխատողների համար ճաշ է պատրաստում, դերձականոցում շորեր է կարում և այլն, միանգամայն բնական են թվում։

Հասարակական աշխատանքի սոցիալիստական բաժանման ձևերը աստիճանաբար անդրադառնում են ընտանեկան աշխատանքային բաժանման ձևերի վրա։ Կոլտնտեսության դաշտերում և այգիներում որևէ ասպարեզի մեջ մասնագիտացողը այդ մասնագիտությունը տուն է փոխադրում, որով և փոփոխություն է մտցնում հին ձևերի մեջ, արմատավորում է նորը, առաջավորը։ Դրանով հասարակությունն արագացնում է ընտանիքի աշխատանքային գործունեության ձևերի վերափոխումները։

Ընտանիքի եկամտի երկու աղբյուրների՝ հանրայինի, որ հիմնականն է, և

ընտանեկանի, որ երկրորդականն է, տված եկամուտով վերջին տասնամյակում խիստ բարձրացել է ընտանեկան բյուջեն։

Եկամտի բարձրացումը, որպես նյութական բարեկեցության և կուլտուրական աստիճանի բարձրացման հիմք, գյուղական ընտանիքը մղել է դեպի բազմանդամությունը։

Այս պարագայում բնական էր, որ հարաբերական չափով վերափոխվեին ընտանեկան բաժանքի հնավանդ սովորությունները։ Նախապես իմացված օրենքների և մարդկանց կուլտուրական աստիճանի բարձրացման շնորհիվ ընտանեկան բաժանքը, մեծ մասամբ, տեղի է ունենում առանց կողմնակի անձանց միջամտության և առանց աղմուկների։ Հնում բաժանքը տեղի ունենալուց շուրջ մեկ տարի առաջ արդեն հայտնի էին դառնում դրա նշանները տեսանելի տրոհումների հետևանքով, որին ժողովուրդը համեմատում էր հղիության հետ։ Այդ «հղիության» շրջանում տրոհվող ընտանիքի յուրաքանչյուր կողմի (բաժանվողների) շուրջ համախմբվում էին նրանց համախոհները, որով և խորանում էին հակասությունները, երբեմն հասցնելով լուրջ կռիվների։ Եվ որովհետև մեր օրերում բաժանվող ընտանիքը կապված չէ մասնավոր սեփականության, մասնավորապես հողային հին հարաբերությունների հետ, ինչպես նաև կոլտնտեսային արտադրության մեջ ակնհայտ է բաժանվող կողմերի և՛ վաստակը, և՛ անձնական սեփականությունը, նման երևույթները հազվադեպ են։

Ընտանեկան կուլտուրա.— Համեմատաբար պատմական կարճ ժամանակամիջոցում կատարված տնտեսական ու կուլտուրական փոփոխությունները հայկական գյուղական ընտանիքն ազատեցին միջնադարականությունից և սուրբ դրքի «կուլտուրայից»։ Համատարած գրագիտության հիման վրա կրոնական պատկերացումներից ազատվելը և գիտության նվաճումներին հաղորդակից դառնալը գյուղական ընտանիքներին մղեց ոչ միայն հավասար իրավահարաբերությունների, այլև կուլտուրականության։ Գրականության ու մամուլի հետ ունեցած կապի շնորհիվ առաջացավ սեփական գրադարան ունենալու անհրաժեշտությունը. գյուղական ինտելիգենցիայի օրինակով առաջավոր ընտանիքները ստեղծեցին սեփական գրադարաններ, տասնյակ և հարյուրավոր կտոր գրականությամբ։

Գրեթե ամենուրեք ցանցավորված ռադիո բարձրախոսների և ռադիոընդունիչների միջոցով գյուղական ընտանիքը հաղորդակից է դարձվում երկրի առօրյային, միջազգային հարաբերություններին և համազգային կուլտուրային։ Պատեֆոնը, շախմատը, աղդային «դամա» խաղը, շաշկին և այլն փոխել են ընտանիքի անդամների կուլտուրական ժամանցի ձևերը։ Կանանց միջոցով գյուղ թափանցեցին և մասսայականացան ձեռարվեստի բազմազան ձևերը։ Նորաձև բնակարաններում փոխվել են խոհանոցային և կերակրվելու պայմանները։ Թիթեղյա վառարանները, էլեկտրական պլիտաները և նավթավառները շատ տեղերում կիսով չափ փոխարինել են թոնրատուն-խոհանոցներին։ Դրա հետևանքով կրճատվեցին կավե ամանները։ Իսկ ուտելու նոր ամանների գործածությունը գրեթե ամբողջովին դուրս մղեց կավե և փայտե ամանների գործածությունը։ Ուր որ մուսաք են գործել պատառաքաղերով ճաշելու սովորություններ, վերացված են նաև ձեռքով ուտելու ձևերը։

Կուլտուրական նոր պահանջների հետևանքով գյուղական ինտելիգենցիային և բոլոր առաջավոր ընտանիքներին վաղուց է, ինչ չեն բավարարում տեղական շրջիկ ներկայացումները։ Սեփական մեքենաներով՝ անհատապես և կոլ-

տնտեսության մեքենաներով՝ կոլեկտիվ ձևով կոլտնտեսականները երկար ժամանակ է, ինչ կապված են եղել մերձավոր քաղաքների թատրոնների և մայրաքաղաքի օպերային թատրոնի հետ։ Իսկ 1953 թ. սկսած, Երևանի Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի թատրոնի նախաձեռնությամբ նախապես կատարված տեղաբաշխման համաձայն հաճախ օպերա են դիտում մերձավոր և հեռավոր շրջանների կոլտնտեսականները։

Նյութականորեն և քաղաքականորեն աղատ Հայաստանի գյուղական երգերին այժմ փոխարինել են արդեն համազգային դարձած ուրախ երգերն ու ընտանիքներում երբեմնի լացի ու տրտունջի և գավառային նեղ կոլորիտալ երաժշտությունը, որոնց տարածման գործում խոշոր աշխատանք են ծավալել քաղաքների և շրջանային երաժշտական կազմակերպությունները՝ ռադիոյի և դյուղերն այցելելու միջոցով։ Իսկ այդ բոլորը կարևոր ազդեցություն են դործել ընտանեկան դաստիարակության վրա։ Կուլտուրական աստիճանի բարձրացման պայմաններից մեկն ընտանիքների անդամների փոխադարձ բարոյական պարտականությունների կատարման աննախադեպությունն է։

Ամուսինները կոլտնտեսային արտադրության մեջ փոխադարձ լուրջ աջակցություն դտնելով զարդացնում են իրենց մասնագիտական որակը։ Երեխաների դաստիարակության իմաստով նրանք տան կենտրոնական կերպարներն են, ըստ որում հայ գյուղացի հայրը հսերի նման երեխաների խնամքի գործում կնոջը մենակ չի թողնում. բացառություններ անշուշտ կան, որ էությամբ կապվում են հին կենցաղի մնացուկների հետ։ Հասունացած տղաներն իրենց կանանց, և աղջիկներն իրենց ամուսինների հետ սերտ կապի մեջ են դտնվում իրենց ծնողների հետ։

Բայց, ինչպես կենցաղի բոլոր բնագավառներում, կուլտուրական գծով էլ փոփոխությունները կատարվել են նորի ու հնի միջև դրսևորվող սուր պայքարի միջոցով։ 1920-ական թթ. երբ ժողովուրդը դեռևս պահպանում էր ներընտանեական նիստ ու կացի հին ձևերը, գոմի օդաներում[1] հեքիաթներ ու առակներ պատմելու, Երբեմնի հասարակական նշանակություն ունեցող հարցերը տարբերային կարդով նույն հավաքատեղիներում խնդրի առարկա դարձնելու և այլ նման սովորույթներն ու ժամանցի ձևերը,— նորի ընկալումն այդպիսի ընտանիքներում դիմադրության էր հանդիպում։ Նորածիլ խրճիթ-ընթերցարաններն այդ հետամնացությունն աստիճանաբար վերացնելու դործում նշանակալից դեր խաղացին։ Այդ իսկ թվականներին թատերական ներկայացումներում չափազանց ամոթաբեր և անպատվաբեր էին համարվում աղջիկների դերակատարման փորձերը, ուստի կանացի դերերը տղաներն էին կատարում։ Հաջորդ տասնամյակում ընտանիքն արդեն ոչ միայն հանդուրժում, այլև խրախուսում էր իր դստեր ելույթներն ակումբներում և կուլտուրայի աներում։ Իսկ 1940-ական թվականները նշանավորվեցին նրանով, որ հայ աղջիկը, մասամբ և հարսը,— որը Երբեմն տղամարդ տեսնելիս սովորույթի համաձայն պարտավոր էր երեսը շուռ տալ դեպի պատը,— դարձան այդ ներկայացումների և մանավանդ ազդային երգ ու պարերի խմբերի տեղական անսամբլների ակտիվ մասնակիցներն ու կազմակերպիչները։

---

[1] «Օդան» էր կոչվում գոմի մի ծայրում պատրաստված այն ոնյակը, որը ջերմացվում էր անասունների շնչով և մասամբ էլ նրա պատամիջյան օջախով։ Օդան լուսավորվում էր կաուրից բացված լուսամուտով։